

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Քառասուն
տարիներ



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Lyn Doerksen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.


Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.






Երբ Աստուած փրկեց
հարայելացիները Եգիպտոսէն,
Մովսէս ժողովուրդը պաշտամունքի
առաջնորդեց: Ան գովասանքի երգ
մը յօրինեց: "Ես պիտի երգեմ Տէրոջը,
որ ինք հպարտօրէն յաղթեց" Մովսէս
երգեց ամէն ինչ որ մեծ գործեր ըրեր
Եր Աստուած հարայելի համար:

HALLELUJAH!
GLORY TO GOD!






Երեք օրեր ետք անապատին մեջ
ծառաւ ժողովուրդը լին մը գտաւ:
Բայց չէին կրնար խմել այդ լեղի
ջուրը: Աղօթելու փոխարէն,
ժողովուրդը գանգատեցաւ:


Աստուած շատ
բարեսիրտ էր:
Ան ջուրը ըմպելի
ջուրի վերածեց:





Այդպես էր, ժողովուրդը
ամեն ինչի համար
կը գանգատեր:





"Մենք
կերակուր
ունենք
Եգիպտոսի
մէջ: Անապատին
մէջ անօթութենէն պիտի
մեռնինք", անոնք պոռթկացին,
նոյն իրիկունը Աստուած թռչուններ
դրկեց անոնց, որ ասպետահաւ կը կոչուէին:
Ժողովուրդը դիւրութեամբ բռնեց անոնց:




Յաջորդ առաւօտ Աստուած
մանանա դրկեց: Հացի
տեսակ մըն էր, որուն
համը մեղրի խմորով էր:
Ամէն առտու գետինը
մանանա կար


հաւաքուելու: Այս
ձեւով Աստուած
կերակրեց
իր ժողովուրդը
անապատին մէջ:



Անոնք Աստուծոյ կը վստահէին իրենց ամէնօրեայ
ուտելիքը: Բայց մի քանիներ աւելի մանանայ կը
հաւաքէին, գիտնալով, որ Աստուած ըսաւ, որ
յաջորդ օրուան կը բորբոսի:



Անշուշտ իրիկուկայ մանանան լեցուն էր իւղով,
բացի Շաբաթ օրը: Այդ մասնաւոր եօթներորդ օրը
ժողովուրդը կը հանգչեր եւ մէկ օր առաջուկայ
մանանան կ'ուտեր:



Աստուած իսրայելացիներուն
հոգաց անապատին մէջ:
Անոնց ջուր եւ կերակուր
հայթայթեց եւ
թշնամիներէն
պաշտպանեց:



Երբ Ամալեկացիները
յարձակեցան, Իսրայել
միշտ շահեցաւ կռիւները
այնքան ատեն, որ
Մովսէս կը շակեր
Աստուծոյ
ցուպը:





Աստուած

իսրայելացիներուն ըսաւ.

"Եթէ հնազանդիք իմ ձայնիս, դուք իմ
նախընտրելի ժողովուրդը պիտի ըլլաք": "Ամէն ինչ
որ Աստուած ըսէ, մենք պիտի գործադրենք", ըսաւ
ժողովուրդը Մովսէսին: Անոնք ժողովեցան Սինա
լերան ստորոտը եւ սպասեցին մինչ Մովսէս լեռ
բարձրացաւ հանդիպելու համար Աստուծոյ հետ:





Քառասուն օր
Մոկսես Աստուծոյ
հետ էր:

Աստուած
անոր
գրեց Տասը
պատուիրանները,
երկու մեծ
քարերու վրայ:





Ան ըսաւ
Մովսէսի, թէ
ինչպէս Ան
կ'ուզէ, որ իր
ժողովուրդը
ապրի:



1. "Ուրիշ
Աստուած
պիտի
չունենաք
հնձմէ զատ":

2. "Նկարներ մի՛
շինէք եւ
անոնց մի
խոնարհիք":

3. "Տիրոջ
անունը պարապի
բերաննիդ
մի՛ առնէք":

4. "Յիշեցէք Շաբաթ
օրը, որպէսզի
սարսափիք":

5. "Յարգէ քու հայրդ
ու մայրդ":



6. "Մի՛ սպաններ":


7. "Մի՛ շնար":

8. "Գողուժիւն
մի՛ ըներ":

9. "Սուտ
մի՛ խօսիր":

10. "Պիտի չի
ցանկաս":





Մինչ Մովսէս Աստուծոյ
հետ էր Սինա լեռան
վրայ էր, իսրայելացիք
սարսափելի բան մը
ըրին: Անոնք Ահարոնի
հրամայեցին, որ ոսկիէ
հորթ մը շինէ, եւ անոնք
սկսան զայն պաշտել
Աստուծոյ փոխարէն:
Աստուած շատ
բարկացաւ: Նոյնպէս
Մովսէս:






Երբ Մովսես տեսաւ
հորթը եւ ժողովուրդը,
որ կը պարէ, ձեռքի
քարը գետին զարկաւ
եւ ջախջախեց:
Բարկացած Մովսես
քանդեց ոսկիէ
արձանը: Ան սպաննեց
ամէն չար մարդիկը, որ
պաշտեցին այդ
արձանը:



Աստուած քարէ նոր
գրութիւններ տուաւ
Մովսէսի: Ան ըսաւ Մովսէսի,
որ կառուցէ խոշոր վրան մը,
շուրջը ցանկապատով, ուր
Աստուած կրնայ բնակիլ իր
ժողովուրդին հետ: Անոնք
Աստուծոյ հոն պիտի
պաշտէին ամպի եւ
կրակի սիւներով
պաշարուած,
որ
Աստուած
իրենց հետ էր:



Երբ հասան Քանաանի մօտերը, Մովսես
տասներկու լրտեսներ դրկեց, որ ուսումնասիրեն
Աստուծոյ խոստացած հողը իր ժողովուրդին:



Լրտեսները բոլորն ալ համաձայն էին, որ հողը
շատ գեղեցիկ էր: Միայն երկու հոգի ճոշուա եւ
Քաղէք կը հաւատային, որ կրնան այդ հողերը
գրաւել Աստուծոյ օգնութեամբ:




Մնացեալ լրտեսները կը
վախնային քաղաքին
հզօրութեան եւ անոր
մէջ գտնուող հսկաներէն:
"Մենք չենք կրնար
գրաւել այս
հողը: Անոնք
կը մրմնջէին:

Անոնք մոռցան
բոլոր հզօր
բաները, որ Աստուած
ըրաւ իրենց Եգիպտոսէն
դուրս բերելու համար":



Ժողովուրդը հետեւեցաւ այդ տասը անհաւատ
լրտեսներուն: "Անոնք լացին եւ պատրաստուեցան
Եգիպտոս վերադառնալ: Անոնք
մինչեւ իսկ փորձեցին
սպաննել Մովսէսը":



Աստուած փրկեց Մովսէսի կեանքը: Յետոյ Ան
ըսաւ իր ժողովուրդին, "Քառասուն տարի պիտի
թափառիք անապատին մէջ միայն Գալէպ, Ճոշուա
եւ իրենց պզտիկները պիտի
մտնեն այն հողերը,
զորս դուք
անարգեցիք":



Քառասուն տարիներ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ելից 15 - թիւեր 14

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

